ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2018 թ. օտար լեզուներից ազգային ստուգատեսի արդյունքների ընդհանուր վերլուծություն

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

1.1. ՕԼԱՍ-ի թեստի առաջադրանքները 4

1.2. Ստուգատեսի արդյունքների սանդղակավորումը 5

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 6

2.1. Միավորների բաշխման հիստոգրամները 6

2.2. Միավորների բաշխման բնութագրիչները 7

2.3. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 7

3. ՕԼԱՍ-Ի ԹԵՍՏԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ 8

4. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՐՈՇ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ 9

5. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 12

6. ՕԼԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 14

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 15

8. ՄԱՍՆԱԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ 17

9. ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 19

10. ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 20

11. ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 26

12. ՕԼԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 28

12.1. «Անգլերեն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն 28

12.2. «Ռուսաց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն 28

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի մարտի 12-ից մայիսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության պատվերով հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 102 հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաներից անցկացվել է ազգային ստուգատես: Ստուգատեսի նպատակն է եղել պարզել հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը և դրանց ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները:

Համառոտ ակնարկ

Արտաքին գնահատման մեջ կարևոր դեր ու նշանակություն ունեն ազգային և միջազգային ստուգատեսները: Եթե միջազգային ստուգատեսներն անցկացվում են մասնակից երկրների կրթության մակարդակը պարզելու և համեմատելու այն մյուս երկրների կրթական մակարդակների հետ, ապա ազգային ստուգատեսներն անցկացվում են երկրի կրթական ոլորտում խնդիրների բացահայտման, կրթական տարբեր մակարդակների ու խմբերի ուսման որակի հետազոտման նպատակով: Ստուգատեսների թեստերը կազմվում են իրական կյանքում հանդիպող իրավիճակներին համապատասխան խնդիրներից, ի տարբերություն հայ աշակերտներին ծանոթ թեստերից, որոնք կազմվում են զուտ գործող առարկայական ծրագրերի շրջանակներում և առանձնանում են իրենց ոճով ու բնույթով: 2010 թվականից Հայաստանի Հանրապետությունում ամեն տարի անցկացվում է ազգային ստուգատես որևէ ոլորտից. հայագիտական (ՀԱԱՍ), բնագիտական (ԲԱԱՍ) կամ օտար լեզուներից (ՕԼԱՍ): 2018 թվականին անցկացվել է օտար լեզուներից ազգային ստուգատես, որի առաջադրանքները կազմվել են այնպես, որ դրանք և՛ ձևակերպման, և՛ բովանդակության առումով գրավիչ լինեն:

ՕԼԱՍ-ի կազմակերպումը

Օտար լեզուներից ազգային ստուգատեսը անցկացվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի աշխատակիցների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են ստուգատեսի ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Թեստերի կառուցվածքը

Թեստ-գրքույկը բաղկացած է եղել երեք մասերից, 1-ին և 2-րդ մասերում ներկայացվող առաջադրանքները ներառել են հարցադրումներ անգլերենից և ռուսերենից: Յուրաքանչյուր մասի կատարմանը հատկացվել է 45 րոպե: Գրքույկի

3-րդ մասում տրվել են հարցեր աշակերտի նախասիրությունների, զբաղմունքների, ընտանիքի, դպրոցի և այլնի մասին: Իրենց մասին հարցաթերթիկի լրացման համար աշակերտներին հատկացվել է լրացուցիչ 15 րոպե:

Նպատակը

ՕԼԱՍ – 2018 - ի նպատակն է եղել պարզել հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի աշակերտների պատրաստվածությունը օտար լեզուներից հետևյալ ուղղություններով.

- **խոսքի մշակույթ** - խոսքի համապատասխանությունը գրական լեզվի գործող օրինաչափություններին,
- **կարդացածի ընկալում** - աշխատանք տեքստի վրա,
- **երկկողմ թարգմանություն** - թարգմանություններ ռուսերենից և անգլերենից հայերեն և հակառակը,
- **շարադասություն** - կապակցված միտք արտահայտելու համար նախադասություն կազմող բառերը որոշակի կարգով դասավորելու հմտություն:

Ընտրանքը

Ազգային ստուգատեսին մասնակցել են Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևանում գտնվող 2 ավագ, 50 հիմնական, 40 միջնակարգ դպրոցների, 4 վարժարանների և 6 ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի 2993 աշակերտներ:

ՕԼԱՍ-ի արդյունքների վերլուծությունը

Օտար լեզուներից ազգային ստուգատեսի արդյունքների և հարցաթերթի վերլուծությունը կատարվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

- ընդհանուր, որտեղ ներկայացվել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարաններում անցկացված ազգային ստուգատեսի ընդհանուր արդյունքները,
- առարկայական, որտեղ ներկայացվել է թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների և թեստերում ընդգրկված բաժինների. այն տրամադրվել է առարկայական մասնագետներին,
- երկրորդային վերլուծություն, որտեղ ներկայացվել են ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ, ներկայացվել են նաև առաջադիմության վրա ազդող գործոնները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՕԼԱՍ-ի թեստի առաջադրանքները

Ազգային ստուգատեսի ընթացքում օգտագործվել են թեստերի 4 տարբերակներ: Յուրաքանչյուր թեստ բաղկացած է եղել 40 առաջադրանքներից, որոնցից 20-ը՝ անգլերենից, 20-ը՝ ռուսաց լեզվից: Առաջադրանքներից 3-ը եղել են ընտրովի պատասխանով, 17-ը՝ կարճ պատասխանով: Կարճ պատասխանով առաջադրանքները գրելու համար սովորողից պահանջվել էր կատարել մեկ կամ երկու քայլ: Ընտրովի պատասխանով և մեկ քայլ պահանջող առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորներով (համապատասխանաբար սխալ կամ ճիշտ կատարման դեպքում), իսկ երկու քայլ պահանջող առաջադրանքները գնահատվել են 0, 1 կամ 2 միավորներով (համապատասխանաբար սխալ, մասնակի ճիշտ կամ ճիշտ կատարման դեպքում):

Աղյուսակ 1-ում ներկայացված է թեստի առաջադրանքների բովանդակային բաշխումը.

Աղյուսակ 1

Առաջադրանքի համարը	Ստուգվող բովանդակային բաժինը	Առաջադրանքի տեսակը	Միավորը
1	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	1
2	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	1
3	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	1
4	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	1
5	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	1
6	Խոսքի մշակույթ	Կարճ պատասխանով	2
7	Կարդացածի ընկալում	Ընտրովի պատասխանով	1
8	Կարդացածի ընկալում	Ընտրովի պատասխանով	1
9	Կարդացածի ընկալում	Կարճ պատասխանով	2
10	Կարդացածի ընկալում	Կարճ պատասխանով	2
11	Կարդացածի ընկալում	Կարճ պատասխանով	2
12	Կարդացածի ընկալում	Կարճ պատասխանով	2
13	Երկկողմ թարգմանություն	Կարճ պատասխանով	2
14	Երկկողմ թարգմանություն	Կարճ պատասխանով	2
15	Երկկողմ թարգմանություն	Կարճ պատասխանով	2
16	Երկկողմ թարգմանություն	Կարճ պատասխանով	2
17	Երկկողմ թարգմանություն	Կարճ պատասխանով	2
18	Շարադասություն	Կարճ պատասխանով	2
19	Շարադասություն	Կարճ պատասխանով	2
20	Շարադասություն	Ընտրովի պատասխանով	1

Ստուգատեսի թեստերից հնարավոր է եղել վաստակել առավելագույնը 32 միավոր, գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է թեստերի մշակման ժամանակակից տեսությամբ:

1.2. Ստուգատեսի արդյունքների սանդղակավորումը

Տարբեր թեստերի կամ տարբեր առարկաների միավորները միմյանց հետ համեմատելի դարձնելու համար թեստային նախնական միավորներից անցում է կատարվել թեստերի մշակման ժամանակակից տեսության՝ IRT միավորներին, որոնք ցույց են տալիս սովորողների պատրաստվածությունը՝ անկախ թեստի բարդությունից: IRT միավորները հիմնականում գտնվում են -3-ից +3-ի սահմանում, որտեղ 0-ն միջին միավորն է: Ընթերցողին ավելի մատչելի ներկայացնելու համար IRT միավորները գծային արտապատկերմամբ տեղափոխվել են գնահատման 1-10 միավորների սանդղակ[1]:

[1] Baker, Frank (2001). “The Basics of Item Response Theory”. ERIC Clearinghouse on Assessment and Evaluation, University of Maryland, College Park, MD (էջ 14)

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Միավորների բաշխման հիստոգրամները

Ստուգատեսի արդյունքների նախնական միավորների բաշխման հիստոգրամները:





Միավորների բաշխման հիստոգրամները արդյունքների սանդղակավորումից հետո:





2.2. Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 2

Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[2]	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)[3]	Հուսալի-ությունը[4]
Անգլերեն	**2993**	5.07	0.036	1.98	0.92
Ռուսաց լեզու	**2993**	5.96	0.036	1.97	0.92

2.3. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի (1-3, 4-5, 6-8 և 9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 1



[2] Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:
[3] 10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1.5-ից:
[4] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Դիագրամում տեսնում ենք, որ «Անգլերեն» առարկայի դեպքում գերակշռել են 4 և 5 գնահատականները, «Ռուսաց լեզու» առարկայից՝ 6-8 գնահատականները:

3. ՕԼԱՍ-Ի ԹԵՍՏԵՐԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Աղյուսակ 3-ում ներկայացված են ըստ առարկաների թեստերը բնութագրող վիճակագրական տվյալներ: Հաշվարկվել է յուրաքանչյուր թեստի կորելյացիոն գործակիցը[5], որը ցույց է տալիս, թե տվյալ թեստը ինչքանով է ազդել ընդհանուր արդյունքների վրա:

Աղյուսակ 3

Ռուսաց լեզու						
Թեստի համարը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատ-ման սխալը	Ստանդարտ շեղումը	Թեստի բարդությունը	Թեստի կորելյացիան
1	766	5.82	0.076	2.108	0.56	0.64
2	763	5.99	0.065	1.787	0.60	0.62
3	746	5.69	0.069	1.898	0.56	0.62
4	718	6.38	0.076	2.045	0.62	0.63
Անգլերեն						
Թեստի համարը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատ-ման սխալը	Ստանդարտ շեղումը	Թեստի բարդությունը	Թեստի կորելյացիան
1	766	5.32	0.069	1.899	0.48	0.65
2	763	4.94	0.063	1.749	0.43	0.62
3	746	5.13	0.083	2.258	0.46	0.63
4	718	4.90	0.071	1.905	0.42	0.63

Արդյունքների արժանահավատությունն ապահովված է, քանի որ յուրաքանչյուր թեստի համար ընտրանքը կազմել է 718-766 աշակերտ:

Վերլուծությունից պարզվել է, որ բոլոր թեստերը եղել են միջին բարդության և հուսալի, ընդ որում՝ յուրաքանչյուր դասարանի համար կազմված չորս թեստերը եղել են միմյանց համարժեք:

[5] Կորելյացիոն գործակիցը կարող է տատանվել -1-ից մինչև +1: Եթե այն մոտ է 1-ին, նշանակում է կապն ուժեղ է, եթե մոտ է 0-ին, կապը թույլ է կամ անկայուն:

4. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՐՈՇ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ

Ինչպես նշվել է ներածությունում, աշակերտների ունակությունները ստուգվել են չորս ուղղություններով: Ստորև բերված աղյուսակներում ներկայացված են յուրաքանչյուր բաժնի առաջադրանքների առավելագույն նախնական միավորը, տվյալ առաջադրանքներին տրված ճիշտ պատասխանների տոկոսային թիվը և այդ խմբում աշակերտների գրանցած միջին միավորը:

«Խոսքի մշակույթ» բաժնում ստուգվել են աշակերտների խոսակցական հմտությունները, ակնկալված առավելագույն նախնական միավորը եղել է 7:

Աղյուսակ 4

Առավելագույն միավորը	Անգլերեն		Ռուսաց լեզու	
	ճիշտ պատասխանած աշակերտների		ճիշտ պատասխանած աշակերտների	
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
0	172	5.8 %	86	2.9 %
1	125	4.2 %	95	3.2 %
2	232	7.8 %	198	6.6 %
3	306	10.2 %	292	9.8 %
4	415	13.9 %	446	14.9 %
5	505	16.9 %	485	16.2 %
6	653	21.9 %	531	17.8 %
7	578	19.4 %	854	28.6 %

Այս բաժնում «Ռուսաց լեզու» առարկայի առաջադրանքներին աշակերտներն ավելի լավ են պատասխանել, քան «Անգլերեն» առարկայի առաջադրանքներին, նրանց 28.6 տոկոսը ռուսաց լեզվից և 19.4 տոկոսն անգլերենից հավաքել են առավելագույն միավոր:

«Կարդացածի ընկալում» բաժնում աշակերտները կատարել են աշխատանք տեքստի վրա: Այս բաժնի առավելագույն նախնական միավորը եղել է 10:

Աղյուսակ 5

Առավելագույն միավորը	Անգլերեն		Ռուսաց լեզու	
	ճիշտ պատասխանած աշակերտների		ճիշտ պատասխանած աշակերտների	
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
0	434	14.5 %	342	11.4 %
1	294	9.8 %	120	4.0 %
2	425	14.2 %	387	13.0 %
3	342	11.4 %	345	11.6 %
4	315	10.5 %	254	8.5 %
5	258	8.6 %	253	8.5 %
6	243	8.1 %	203	6.8 %
7	118	4.0 %	253	8.5 %
8	212	7.1 %	269	9.0 %
9	82	2.7 %	250	8.4 %
10	263	8.8 %	311	10.4 %

Աղյուսակի տվյալներից կարելի է ենթադրել, որ աշակերտները ռուսաց լեզվի տեքստերը ավելի լավ են ընկալել, քան անգլերենի տեքստերը:

Երկկողմ թարգմանություն. թարգմանություններ ռուսերենից և անգլերենից հայերեն և հակառակը: Ակնկալված առավելագույն նախնական միավորը եղել է 10:

Աղյուսակ 6

Առավելագույն միավորը	Անգլերեն		Ռուսաց լեզու	
	Ճիշտ պատասխանած աշակերտների		Ճիշտ պատասխանած աշակերտների	
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
0	1406	47.1 %	573	19.2 %
1	58	1.9 %	39	1.3 %
2	271	9.1 %	135	4.5 %
3	47	1.6 %	41	1.4 %
4	231	7.7 %	178	6.0 %
5	52	1.7 %	80	2.7 %
6	230	7.7 %	288	9.6 %
7	42	1.4 %	95	3.2 %
8	216	7.2 %	285	9.5 %
9	37	1.2 %	118	4.0 %
10	396	13.3 %	1155	38.7 %

Աշակերտները երկկողմ թարգմանություն լավ են կատարել ռուսաց լեզվից, նրանց 38.7 տոկոսը հավաքել է առավելագույն նախնական միավոր, իսկ անգլերենից՝ 13.3 տոկոսը: Անգլերենից աշակերտների 47.1 տոկոսը, ռուսերենից 19.2 տոկոսը չեն կատարել կամ սխալ են կատարել այս խմբի բոլոր առաջադրանքները:

«Շարադասություն» բաժնում աշակերտը պետք է կարողանար կառուցել հարցական նախադասություն, ինչպես նաև կապակցված միտք արտահայտելու համար բառերը դասավորեր որոշակի կարգով:

Աղյուսակ 7

Առավելագույն միավորը	Անգլերեն		Ռուսաց լեզու	
	Ճիշտ պատասխանած աշակերտների		Ճիշտ պատասխանած աշակերտների	
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
0	1689	56.5 %	1032	34.5 %
1	588	19.7 %	644	21.6 %
2	91	3 %	108	3.6 %
3	85	2.8 %	289	9.7 %
4	161	5.4 %	212	7.1 %
5	372	12.5 %	702	23.5 %

Երկու լեզուներից էլ աշակերտները ավելի շատ դժվարացել են այս բաժնի առաջադրանքները կատարելիս:

5. ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Մասնակիցների 47.9 տոկոսը աղջիկներ են, 52.1 տոկոսը՝ տղաներ: Աղյուսակ 8-ում ըստ սեռերի ներկայացված է նշված առարկաներից մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 8

Առարկան	Տղա			Աղջիկ		
	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Անգլերեն	1557	4.68	1.90	1429	5.49	1.957
Ռուսաց լեզու		5.76	2.01		6.18	1.93

Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ երկու առարկաներից էլ աղջիկները տղաներից 0.4-0.8 միավորով ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

Ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:





Ինչպես միշտ, գերակշռում են տղաների ցածր միավորները, աղջիկների բարձր միավորները:

6. ՕԼԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Ստորև բերված աղյուսակում ՀՀ վարչատարածքային միավորների համար ներկայացված են արդյունքների վիճակագրական տվյալներն ըստ առարկաների:

Ժամանակի սղության պատճառով՝ չորս մարզերում ՕԼԱՍ չի կազմակերպվել:

Աղյուսակ 9

Վարչատարածքային միավորը	Առարկան	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	0 – 3 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսը	4 – 5 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսը	6 – 8 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսը	9 – 10 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսը
Արարատ	Անգլերեն	357	4.74	12.6	62.5	24.3	0.6
	Ռուսաց լեզու		5.44	8.1	42.9	45.4	3.6
Գեղարքունիք	Անգլերեն	344	**3.47**	50.9	39.6	9.0	0.64.
	Ռուսաց լեզու		4.17	33.1	45.9	19.7	1.2
Երևան	Անգլերեն	882	5.90	12.2	29.1	44.8	13.8
	Ռուսաց լեզու		6.80	4.1	15.1	63.5	17.4
Լոռի	Անգլերեն	349	5.26	12.6	48.7	32.6	6.0
	Ռուսաց լեզու		6.52	6.0	26.7	46.9	20.3
Շիրակ	Անգլերեն	353	4.94	15.9	50.4	31.4	2.3
	Ռուսաց լեզու		6.14	5.90	30.0	51.9	12.2
Սյունիք	Անգլերեն	337	5.31	13.1	45.6	36.3	5.1
	Ռուսաց լեզու		6.01	7.1	35.9	45.1	11.9
Տավուշ	Անգլերեն	364	4.63	20.2	56.4	22.0	1.4
	Ռուսաց լեզու		5.39	9.9	42.6	45.1	2.5

Ըստ վարչատարածքային միավորների աշակերտների միջին միավորների համեմատությունն ավելի ակնառու է դիագրամ 2–ում:

Դիագրամ 2



Դիագրամում տեսնում ենք, որ երկու առարկաներից էլ լավագույն արդյունքներ ցուցաբերել են Երևանում, Սյունիքում, Լոռիում: Ցածր արդյունքներ են գրանցվել Գեղարքունիքի մարզում:

7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Օտար լեզուներից ազգային ստուգատեսին մասնակցած 102 հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների 1 տոկոսը ավագ դպրոցների, 58 տոկոսը հիմնական դպրոցների, 33 տոկոսը միջնակարգ դպրոցների, 3 տոկոսը ոչ պետական դպրոցների և 4 տոկոսը վարժարանների աշակերտներ են: Ստուգատեսի մասնակիցների ընտրանքն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ներկայացված է դիագրամ 3-ում:

Դիագրամ 3



Դիագրամ 4



Ինչպես արդեն նշել ենք, այս տարիքում աշակերտներն ավելի լավ են տիրապետում ռուսաց լեզվին: Վերլուծելով ըստ ուսումնական հաստատությունների տիպերի՝ նկատում ենք, որ այդ միտումը նկատվել է ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցների աշակերտների շրջանում, որոնց միջին միավորը ռուսաց լեզվից մոտ 0.9 միավորով բարձր է եղել անգլերենի միջին միավորից, ոչ պետական դպրոցներում «Անգլերեն» առարկայի միջին միավորն է բարձր եղել, իսկ վարժարանների աշակերտների շրջանում երկու առարկաների միջին միավորները մոտ են:

8. ՄԱՄՆԱԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

Օտար լեզուներից ազգային ստուգատեսին մասնակցել են Հայաստանի Հանրապետության 102 հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներ: Ուսումնական հաստատություններից 37-ը անգլերենից, 70-ը ռուսաց լեզվից գրանցել են ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավոր: Հետևյալ աղյուսակում ներկայացված են լավագույն 10 ուսումնական հաստատությունները, որոնք երկու առարկաներից էլ ցուցաբերել են բարձր արդյունքներ:

Աղյուսակ 10

Ուսումնական հաստատությունները		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	
			Ռուսաց լեզու	Անգլերեն
1	«Այբ» ավագ դպրոց	12	8.4	8.6
2	«Քվանտ» վարժարան	33	7.9	8.5
3	«Ֆոտոն» վարժարան	22	7.4	7.9
4	Երևանի թիվ 8 հիմն. դպրոց	58	7.9	7.3
5	«Օհանյանի վարժարան» ՍՊԸ	11	7.1	8.1
6	«Գլոբալ Բրիջ» ավագ դպրոց	8	7.4	7.8
7	«Երևակ» կրթահամալիր	14	6.9	7.8
8	«Էլիտա» հեղինակային միջնակարգ դպրոց	17	7.6	7.1
9	«Ուսմունք» հայ-ռուսական համալսարանի վարժարան	13	7.4	7.3
10	Երևանի թիվ 164 հիմն. դպրոց	25	7.7	7.0

Աղյուսակ 11–ում ներկայացված են Հայաստանի Հանրապետությունում ռուսաց լեզվով խորացված ուսուցմամբ հիմնական և միջնակարգ դպրոցների աշակերտների միջին միավորները՝ «Ռուսաց լեզու» (միջին միավորը 5.96) և «Անգլերեն» (միջին միավորը 5.07) առարկաներից:

Աղյուսակ 11

Ուսումնական հաստատությունները		Միջին միավորը	
		Ռուսաց լեզու	Անգլերեն
1	Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոց	8.34	5.66
2	Երևանի թիվ 122 հիմնական դպրոց	8.04	5.86
3	Երևանի թիվ 8 հիմնական դպրոց	7.93	7.29
4	Երևանի թիվ 164 հիմնական դպրոց	7.72	6.96
5	Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց	7.13	5.38
6	Երևանի թիվ 7 հիմնական դպրոց	6.94	7.18
7	Երևանի թիվ 199 հիմնական դպրոց	6.76	6.17
8	Երևանի թիվ 180 հիմնական դպրոց	6.72	4.72
9	Երևանի թիվ 68 հիմնական դպրոց	6.65	5.74
10	Երևանի Հ. Մաթևոսյանի անվ. հիմնական դպրոց	6.53	5.84
11	Երևանի թիվ 194 հիմնական դպրոց	6.43	5.8
12	Սպիտակի թիվ 8 միջնակարգ դպրոց	6.29	5.53
13	Երևանի թիվ 85 հիմնական դպրոց	6.08	4.13
14	Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց	5.54	4.56
		6.94	5.77

9. ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Դիագրամ 6-ում ներկայացված է ստուգատեսի մասնակիցների ընտրանքն ըստ բնակավայրերի տիպերի:

Դիագրամ 5



Դիագրամ 6



Դիագրամում տեսնում ենք, որ այս տարիքում բոլոր տիպի բնակավայրերում էլ ռուսաց լեզվին ավելի լավ են տիրապետում, քան անգլերենին, և ինչքան բնակավայրը մոտ է խոշոր քաղաքներին, այնքան միջին միավորները բարձր են:

10. ԱԶԳԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՏԵՍԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գրքույկի 3-րդ մասում 8-րդ դասարանի աշակերտներին տրվել են հարցեր հետևյալ բաժիններից.

- Քո մասին,
- Քո նախասիրությունները,
- Ձեր դպրոցը,
- Դասերից հետո,
- Անգլերենը ձեր դպրոցում,
- Ռուսաց լեզուն ձեր դպրոցում:

«Քո մասին» բաժնի «*Բազմանդա՞մ է քո ընտանիքը*» հարցին աշակերտները պատասխանել են «այո», եթե ընտանիքի անդամների թիվը 4 է կամ ավելին, և «ոչ», եթե կազմված է մինչև 4 անդամից: Պարզվել է, որ մասնակիցների 82.1 տոկոսի ընտանիքները բազմանդամ են, 2.3 տոկոսը չի պատասխանել հարցին: Ընտանիքի անդամների թվից կախված՝ միջին միավորների տարբերություն գրեթե չի արձանագրվել. բազմանդամ ընտանիքների երեխաների միջին միավորը ռուսերենից եղել է 5.98, ոչ բազմանդամներինը՝ 5.92, անգլերենից բազմանդամ ընտանիքների երեխաների միջին միավորը 5.13 է, ոչ բազմանդամներինը՝ 5.08:

«Քո նախասիրությունները» բաժնի «*Ո՞րն է քո ամենասիրած առարկան*» հարցին մասնակիցների ամենամեծ՝ 17.8 տոկոսը պատասխանել է՝ «Մաթեմատիկա» առարկան, ամենափոքր՝ 4 տոկոսը նախընտրել է «Քիմիա» առարկան:

Դիագրամ 7



Հետևյալ աղյուսակում ներկայացված են իրենց ամենասիրելի առարկան նշած մասնակիցների թիվը և նրանց միջին միավորներն ստուգվող առարկաներից: Մգացված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 12

Ամենասիրած առարկան	Մասնակիցների		Միջին միավորը	
	թիվը	տոկոսը	Ռուսաց լեզու	Անգլերեն
Չնշված	91	3.1 %	5.52	3.66
Մաթեմատիկա	530	17.8 %	**6.33**	**5.48**
Ֆիզիկա	173	5.8 %	5.92	4.98
Քիմիա	121	4.1 %	5.91	**5.22**
Կենսաբանություն	364	12.2 %	5.81	4.80
Աշխարհագրություն	211	7.1 %	5.71	4.93
Հայոց լեզու և հայ գրականություն	441	14.8 %	5.28	4.45
Հայոց պատմություն	215	7.2 %	5.65	4.77
Ռուսաց լեզու	306	10.3 %	**6.48**	4.83
Անգլերեն	310	10.4 %	**6.34**	**6.40**
Կրկնակի նշված	234	7.8 %	**6.24**	**5.26**

Աղյուսակ 12-ում տեսնում ենք, որ «Անգլերեն» առարկան նախընտրած աշակերտների միջին միավորն անգլերենից եղել է 6.4 (1.3 միավորով բարձր է այդ առարկայի ընդհանուր միջին միավորից), ռուսաց լեզվից՝ 6.3: «Ռուսաց լեզու» առարկան նախընտրած աշակերտների միջին միավորները ռուսաց լեզվից եղել է 6.5, անգլերենից՝ 4.8: Նկատելի է, որ երկու առարկաներից էլ բարձր են եղել ոչ միայն տվյալ առարկան նախընտրած աշակերտների միջին միավորները, այլ նաև «Մաթեմատիկա» առարկան նախընտրողներինը:

«*Ի՞նչ ես պատրաստվում դառնալ*» հարցի պատասխանները հուշում են, որ այս տարիքում աշակերտների 28 տոկոսը դեռ չի կողմնորոշվել, 4 տոկոսը չի նշել, 1.4 տոկոսը նշել է մեկից ավելի մասնագիտություններ, 3 տոկոսը նշել է այլ մասնագիտություն: Տվյալներն ամբողջական ներկայացված են աղյուսակ 13-ում, որտեղ մգացված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 13

Մասնագիտությունը	Մասնակիցների		Միջին միավորը	
	թիվը	տոկոսը	Ռուսաց լեզու	Անգլերեն
Չնշված	109	3.7 %	5.8	3.9
Ուսուցիչ	98	3.3 %	5.8	5.0
Գիտնական	13	0.4 %	**7.0**	**6.5**
Արվեստագետ	131	4.4 %	5.9	5.0
Բժիշկ	371	12.4 %	**6.4**	**5.5**
Արհեստավոր	69	2.3 %	4.7	3.8
Բիզնեսմեն	157	5.3 %	**6.2**	**5.6**
Սպորտսմեն	333	11.2 %	5.2	4.2
Գյուղատնտես	14	0.5 %	5.1	4.2
Իրավաբան	207	6.9 %	**6.4**	**5.8**
Տնտեսագետ	131	4.4 %	**6.6**	**5.9**
Ծրագրավորող	323	10.8 %	**6.4**	**5.4**
Լրագրող	77	2.6 %	**6.4**	**5.6**
Չեմ որոշել	826	27.7 %	5.7	4.9
Այլ	85	2.8 %	**6.1**	**5.3**
Մեկից ավելի նշված	42	1.4 %	**7.0**	**5.5**

Աղյուսակի տվյալներից կարելի է եզրակացնել, որ երեխաներն անկեղծ են պատասխանել հարցին, քանի որ ամենացածր միջին միավորները եղել են արհեստավոր, գյուղատնտես, սպորտսմեն մասնագիտություններն ընտրողներինը, ամենաբարձր միջին միավորները՝ գիտնական, տնտեսագետ, իրավաբան, լրագրող, բիզնեսմեն, բժիշկ և ծրագրավորող մասնագիտություններն ընտրողներինը:

«Ձեր դպրոցը» բաժնի «*Ո՞ր օտար լեզվով ես ավելի հեշտ հաղորդակցվում*» հարցին մասնակիցների 22.1 տոկոսը նշել է անգլերենով, 60.5 տոկոսը՝ ռուսաց լեզվով, 11 տոկոսը՝ ոչ մեկով, 6.4 տոկոսը չի նշել: Անգլերեն նշած աշակերտների միջին միավորն այդ առարկայից եղել է 6.04 (մոտ 1 միավորով բարձր այդ առարկայի ընդհանուր միջին միավորից), ռուսաց լեզուն նշած աշակերտներինն այդ առարկայից՝ 6.2 (0.25 միավորով բարձր այդ առարկայի ընդհանուր միջին միավորից): «Ոչ մեկով» նշածներն անգլերենից գրանցել են 3.9 միջին միավոր, ռուսաց լեզվից՝ 4.7:

«Դասերից հետո» բաժնի «*Ես օգտակար տեղեկություններ եմ ստանում*» - ին տրված պատասխանները առանձնացվել են ըստ սեռերի: Պատասխանների տոկոսային թվերը և աշակերտների յուրաքանչյուր խմբի միջին միավորները ներկայացված են աղյուսակ 14–ում:

Աղյուսակ 14

Օգտակար տեղեկությունների աղբյուրը	Աղջիկ	Տղա	Միջին միավորները			
			Ռուսաց լեզու		Անգլերեն	
			Աղջիկ	Տղա	Աղջիկ	Տղա
Չնշված	6.4 %	8.3 %	**6.1**	**6.0**	4.8	4.0
Դասագրքերից	**41.9 %**	27.6 %	**6.0**	5.5	**5.3**	4.7
Համակարգչից	33.5 %	**46.9 %**	**6.4**	5.9	**5.9**	4.9
Հեռուստացույցից	3.4 %	7.4 %	5.4	5.7	**5.1**	4.4
Գրքերից և ամսագրերից	13.7 %	7.0 %	**6.4**	5.5	**5.8**	4.6
Մեկից ավել նշված	1.3 %	2.8 %	**6.9**	5.6	**5.3**	4.7

Աղյուսակում տեսնում ենք, որ աղջիկների 41.9 տոկոսը նշել է, որ օգտակար տեղեկություններ է ստանում դասագրքերից, իսկ տղաների 46.9 տոկոսը նշել է՝ համակարգչից: Ցածր միջին միավորներ է գրանցել հեռուստացույցից ռուսերենով օգտակար տեղեկություններ ստացող աղջիկների խումբը, անգլերենից՝ այս

հարցին չպատասխանածների խումբը, իսկ տղաները գրեթե բոլոր խմբերում գրանցվել են առարկայի ընդհանուր միջին միավորից ցածր միջին միավոր:

Ուսումնասիրվել է համակարգչից օգտակար տեղեկություններ ստացողների խումբը (ընդհանուր մասնակիցների 40.3 տոկոսը), թե ինչ նպատակով են օգտվում համակարգչից և օրական քանի ժամ:

Աղյուսակ 15

Համակարգչի նպատակային օգտագործումը	Մասնակիցների տված պատասխանները տոկոսներով			
	Տնային առաջադրանքի կատարման համար	Ֆիլմեր դիտելու համար	Գիտահանրա-մատչելի նյութեր կարդալու համար	Խաղալու համար
Բոլորովին ժամանակ չեմ ծախսում	22.8 %	10.2 %	26.3 %	26.6 %
Մինչև 1 ժամ	**48.9 %**	23.8 %	**49.1 %**	22.7 %
1-2 ժամ	17.4 %	**37.3 %**	12.8 %	18.6 %
2 ժամից ավելի	8.2 %	26 %	7.7 %	**30.1 %**

Պարզվում է, համակարգչի նպատակային օգտագործողների մոտ 50 տոկոսը մինչև մեկ ժամ համակարգչից օգտվում է տնային առաջադրանքներ կատարելու (միջին միավորները չեն տարբերվում առարկաների ընդհանուր միջին միավորներից) և գիտահանրամատչելի նյութեր կարդալու նպատակով (միջին միավորները երկու առարկաներից էլ 0.4 միավորով բարձր են առարկաների ընդհանուր միջին միավորներից), 37,3 տոկոսը 1-2 ժամ օգտագործում է ֆիլմեր դիտելու նպատակով և 30 տոկոսը 2 ժամից ավելի օգտագործում է խաղալու նպատակով (միջին միավորները երկու առարկաներից էլ 0.1-0.3 միավորով ցածր են առարկայի ընդհանուր միջին միավորից):

«*Որքա՞ն ժամանակ ես ծախսում համակարգչի առջև հետևյալների համար*» հարցին մասնակիցների մեծամասնությունը պատասխանել է՝ մինչև մեկ ժամ գիտահանրամատչելի նյութեր կարդալու համար: Նրանց միջին միավորը երկու առարկաներից էլ 0.3 միավորով բարձր է եղել ընդհանուր միջին միավորներից: 1-2 ժամ մեծամասնությունը ծախսում է ֆիլմեր դիտելու համար: 2 ժամից ավելի հիմնականում նշել են տնային առաջադրանքներ կատարելու համար: Տրված

պատասխանները և միջին միավորներն ավելի մանրամասն ներկայացված են աղյուսակներ 16-ում և 17-ում.

Աղյուսակ 16

Համակարգչի առջև ծախսած ժամանակը և համակարգչի նպատակային օգտագործումը	Մասնակիցների պատասխանների տոկոսային թվերը			
	Բոլորովին չեմ ծախսում	Մինչև 1 ժամ	1-2 ժամ	2 ժամից ավելի
Չնշված	9.2 %	9.7 %	11.2 %	9.6 %
Տնային առաջադրանքի կատարման	22.4 %	13.0 %	23.4 %	**28.8 %**
Ֆիլմեր դիտելու	**45.3 %**	27.2 %	**46.4 %**	24.1 %
Գիտահանրամատչելի նյութեր կարդալու	14.6 %	**31.3 %**	12.8 %	16.9 %
Խաղալու	8.5 %	18.8 %	6.2 %	20.6 %

Աղյուսակ 17

Համակարգչի առջև ծախսած ժամանակը և համակարգչի նպատակային օգտագործումը	Մասնակիցների միջին միավորները (ստանդարտ շեղումները)							
	Բոլորովին չեմ ծախսում		Մինչև 1 ժամ		1-2 ժամ		2 ժամից ավելի	
	Ռուսաց լեզու	Անգլերեն	Ռուսաց լեզու	Անգլերեն	Ռուսաց լեզու	Անգլերեն	Ռուսաց լեզու	Անգլերեն
Չնշված	5.8 (2.2)	4.3 (2.1)	5.7 (2.3)	4.3 (2.0)	5.5 (2.3)	4.2 (2.0)	5.6 (2.3)	4.3 (2.0)
Տնային առաջադրանքի կատարման	6.0 (1.9)	5.0 (1.9)	5.8 (1.9)	4.9 (1.9)	5.7 (2.0)	4.7 (1.9)	**6.3** (2.0)	**5.6** (2.0)
Ֆիլմեր դիտելու	5.9 (2.0)	5.1 (1.8)	5.7 (1.8)	4.9 (1.9)	**6.2** (1.9)	**5.4** (1.9)	5.9 (1.9)	**5.1** (1.9)
Գիտահանրամատչելի նյութեր կարդալու	6.1 (2.0)	5.3 (2.1)	**6.2** (2.0)	5.4 (2.0)	6.0 (2.0)	**5.3** (1.9)	6.0 (1.9)	**5.1** (1.9)
Խաղալու	**6.2** (1.9)	**5.5** (2.2)	**6.2** (2.0)	5.3 (2.0)	6.1 (2.0)	5.3 (2.0)	5.7 (1.9)	4.7 (1.8)

11. ՀԱՐՑԱՇԱՐԻ ԿՈՐԵԼՅԱՑԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՕԼԱՍ-ի հարցաթերթիկներից ստացված ինֆորմացիայի հիման վրա իրականացվել է կորելյացիոն վերլուծություն: Վերլուծության արդյունքում որոշ հարցեր, որոնց կորելյացիայի գործակիցը մեծ է կամ հավասար 0.5-ի, միավորվել են՝ ձևավորելով նոր փոփոխականներ (ինդեքսներ): Հետագա վերլուծությունն ավելի պարզ դարձնելու նպատակով նոր փոփոխականներին տրվել են իմաստավորված անվանումներ, ըստ էության դրանք գործոններ են, որոնք կապված են սովորողների առաջադիմության հետ և ինչ-որ չափով ազդում են դրա վրա: Հետևյալ աղյուսակներում «Ռուսաց լեզու» և «Անգլերեն» առարկաների համար ներկայացված են կորելյացիոն վերլուծության արդյունքում ստացված գլխավոր գործոնները:

Աղյուսակ 18

Գործոնները	«Ռուսաց լեզու» առարկայի հարցաթերթի հարցերը		Կորելյա-ցիայի գործակիցը
Տնային հանձնարարությունները և աշակերտի ինքնագնահատումը	Որքան հաճախ են հանձնարարվում հետևյալ տնային առաջադրանքները	Թարգմանություն կատարել	0.63
		Բնագրային տեքստեր կարդալ	0.68
		Շարադրություն գրել	0.66
		Գրավոր այլ աշխատանքներ	0.71
	Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում	Տեքստի ընկալում	0.82
		Թարգմանություն	0.82
		Քերականություն	0.77
		Շարադասություն	0.80
		Անգլերենով հաղորդակցում	0.81
Ուսուցչի դերով պայմանավորված աշակերտի վերաբերմունքն առարկային	Ես հաճույքով եմ ռուսաց լեզու սովորում		0.74
	Ռուսաց լեզու իմանալը կարևոր է հաղորդակցվելու համար		0.77
	Ռուսաց լեզուն չեմ սովորում, որովհետև բարդ է		0.72
	Մեր ռուսաց լեզվի ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը		0.78
	Մեր դասարանի աշակերտները ռուսաց լեզվի դասին անկաշկանդ են		0.66
	Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը		0.79
	Իմ ուսուցչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս		0.75
Չինտեգրված աշակերտի շփման և հաղորդակցման խնդիրները	Մյուս աշակերտներն ինձ հեռացրել են խաղերից		0.73
	Մյուս աշակերտներն ինձ ստիպել են անել բաներ, որոնք ես չէի ուզում անել		0.74
	Երբեմն ես վիճել եմ ուսուցիչների հետ		0.69
	Մեր դպրոցի աշակերտները չեն սիրում սովորել		0.62

Աղյուսակ 19

Գործոնները	«Անգլերեն» առարկայի հարցաթերթի հարցերը		Կորելյա-ցիայի գործակիցը
Աշակերտի վերաբերմունքն առարկային և ինքնագնահատումը	Ես հաճույքով եմ անգլերեն սովորում		0.67
	Անգլերեն իմանալը կարևոր է հաղորդակցվելու համար		0.54
	Անգլերեն չեմ սովորում, որովհետև բարդ է		0.63
	Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը		0.50
	Որքան հաճախ են հանձնարարվում հետևյալ տնային առաջադրանքները	Թարգմանություն կատարել	0.52
		Շարադրություն գրել	0.50
		Գրավոր այլ աշխատանքներ	0.58
	Գնահատիր քո կարողությունները հետևյալ ուղղություններում	Տեքստի ընկալում	0.78
		Թարգմանություն	0.82
		Քերականություն	0.80
		Շարադասություն	0.75
		Անգլերենով հաղորդակցում	0.82
Աշակերտի ինտեգրվածությունը դպրոցում, հասակակիցների հետ հարաբերությունները	Ես սիրում լինել դպրոցում		0.67
	Դպրոցն օգնում է աշակերտներին դառնալ ինքնուրույն		0.68
	Անհրաժեշտության դեպքում մյուս աշակերտներն օգնել են ինձ		0.60
	Մյուս աշակերտներն ինձ դիմել են օգնության համար		0.54
	Մեր դպրոցի ուսուցիչները հավասարապես հոգատար են բոլոր աշակերտների նկատմամբ		0.72
Ուսուցչի դերը	Մեր անգլերենի ուսուցիչը հասկանալի է բացատրում դասը		0.52
	Անգլերենի դասը պատրաստելիս ես օգնության կարիք եմ զգում		0.71
	Ինձ հետաքրքիր է իմ ուսուցչի պատմածը		0.50
	Իմ ուսուցչը հետաքրքիր հանձնարարություններ է տալիս		0.50
Ծնողների ներգրավվածությունը ուսումնադաստիարակչական գործընթացում	Ես խոսում եմ ծնողներիս հետ իմ դպրոցական կյանքի մասին		0.58
	Ծնողներս հետաքրքրվում են, թե ինչ սովորեցի դպրոցում		0.61
	Ծնողներս հետաքրքրվում են, որ ես կատարում եմ տնային առաջադրանքներս		0.63
	Ծնողներս օգնում են ինձ կատարելու տնային աշխատանքներս		0.74

Տեսնենք, թե ստացված փոփոխականներից որոնք են ունեցել նշանակալի ազդեցություն սովորողների առաջադիմության վրա:

12. ՕԼԱՍ-Ի ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՌԵԳՐԵՍԻՈՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

12.1. «Անգլերեն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն

«Անգլերեն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունեն սովորողների վերաբերմունքն առարկային, աշակերտի ինքնագնահատումը և, իհարկե, որ մեծ է ուսուցչի դերը: Ծնողների ուշադրությունը նշանակալի ազդեցություն չունի, քանի որ քիչ թվով ծնողներ են կարողանում օգնել իրենց երեխաներին անգլերենից տնային առաջադրանքները կատարելու հարցում:

Սովորողների միջև հետևյալ մոդելը առաջադիմության տարբերությունները բացատրում է 32 տոկոսով (R Square = 0.317):

Y = 5.83 + 0.83 · Աշակերտի վերաբերմունքն առարկային և ինքնագնահատումը + 0.28 · Աշակերտի ինտեգրվածությունը + 0.52 · Ուսուցչի դերը - 0.086 · Ծնողների ուշադրությունը + ε

Որտեղ Y –ը սովորողների կանխատեսվող միավորներն են «Անգլերեն» առարկայից, իսկ ε-ը՝ մոդելի սխալն է, որը ներառում է այն բոլոր փոփոխականները, որոնք նույնպես ազդում են առաջադիմության վրա, սակայն չեն ներառված մեր մոդելում և հարցաթերթիկում: Նշված գործոնների ազդեցության բացակայության դեպքում 10 միավորանոց սանդղակում աշակերտի արդյունքը անգլերենից կլինի 5.83 միավոր:

12.2. «Ռուսաց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծություն

Հետևյալ մոդելը սովորողների միջև առաջադիմության տարբերությունները բացատրում է 9 տոկոսով (R Square = 0.09):

«Ռուսաց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունեն սովորողների տնային հանձնարարությունները և աշակերտի ինքնագնահատումը:

Y = 6.81 + 0.51 · Տնային հանձնարարությունները և աշակերտի ինքնագնահատումը + 0.17 · Ուսուցչի դերով պայմանավորված աշակերտի վերաբերմունքն առարկային + 0.10 · Շփման և հաղորդակցման հմտությունները չզարգացրած աշակերտները + ε

Մեր մոդելի բոլոր գործոնների բացակայության դեպքում սովորողի արդյունքը «Ռուսաց լեզու» առարկայից կլինի 6.81 միավոր (10 միավորանոց սանդղակով):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ **Ստուգատեսի կազմակերպման և անցկացման մասին**

Ազգային ստուգատեսն իրականացվել է ստուգատեսների անցկացման ընթացակարգին համապատասխան՝ սկսած թեստեր կազմելուց, դպրոցների ընտրությունից, վերջացրած տվյալների համակարգչային մուտքագրմամբ և արդյունքների վերլուծությամբ: Արդյունքների արժանահավատությունն ապահովված է, քանի որ յուրաքանչյուր թեստի համար ընտրանքը կազմել է 718-766 աշակերտ:

Վերլուծությունից պարզվել է, որ բոլոր թեստերը եղել են միջին բարդության և հուսալի, ընդ որում՝ յուրաքանչյուր դասարանի համար կազմված չորս թեստերը եղել են միմյանց համարժեք:

- ✓ **Նպատակը**

ՕԼԱՍ – 2018 - ի նպատակն է եղել պարզել հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-րդ դասարանի աշակերտների գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը և դրանց ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները: Աշակերտների պատրաստվածությունը օտար լեզուներից ստուգվել է 4 ուղղություններով, որի արդյունքում պարզվել է, որ բոլոր ուղղություններով էլ «Ռուսաց լեզու» առարկայի առաջադրանքներին աշակերտներն ավելի լավ են պատասխանել, քան «Անգլերեն» առարկայի առաջադրանքներին: Երկու լեզուներից էլ աշակերտները ավելի շատ դժվարացել են «Շարադասություն» բաժնի առաջադրանքները գրելիս:

- ✓ **Միավորների բաշխումն ըստ առարկաների**

Մասնակիցների միջին միավորները նշանակալի բարձր են եղել ռուսաց լեզվից: «Անգլերեն» առարկայի դեպքում գերակշռել են 4 և 5 գնահատականները, «Ռուսաց լեզու» առարկայից՝ 6-8 գնահատականները

- ✓ **Վերլուծություն ըստ սեռերի**

Ըստ սեռերի արդյունքների համեմատության մեջ տեսնում ենք, որ երկու առարկաներից էլ աղջիկները տղաներից 0.4-0.8 միավորով ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

- ✓ **ՕԼԱՍ-ի արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների**

Երկու առարկաներից էլ լավագույն արդյունքներ ցուցաբերել են Երևանում, Սյունիքում, Լոռիում: Ցածր արդյունքներ են գրանցվել Գեղարքունիքի մարզում:

- ✓ **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցների աշակերտների միջին միավորները ռուսաց լեզվից մոտ 0.9 միավորով բարձր է եղել անգլերենի միջին միավորից, ոչ պետական դպրոցներում անգլերենի միջին միավորն է բարձր եղել, իսկ վարժարանների աշակերտների շրջանում երկու առարկաների միջին միավորները մոտ են:

- ✓ **Ստուգատեսի արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի**

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ բոլոր տիպի բնակավայրերում էլ ռուսաց լեզվին ավելի լավ են տիրապետում, քան անգլերենին, և ինչքան բնակավայրը մոտ է խոշոր քաղաքներին, այնքան երկու առարկաների միջին միավորները բարձր են:

- ✓ **Ազգային ստուգատեսի հարցման արդյունքների վերլուծություն**

Կատարվել է երկրորդային վերլուծություն, որտեղ ներկայացվել են ազգային ստուգատեսի ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ, ներկայացվել են նաև առաջադիմության վրա ազդող որոշ գործոններ:

Ընտանիքի անդամների թվից կախված՝ միջին միավորների տարբերություն գրեթե չի արձանագրվել:

Մասնակիցների ամենամեծ՝ 17.8 տոկոսի ամենասիրված առարկան մաթեմատիկան է եղել: Նկատելի է, որ երկու առարկաներից էլ միջին միավորները բարձ են եղել ոչ միայն տվյալ առարկան ընտրած աշակերտների, այլ նաև «Մաթեմատիկա» առարկան ընտրածների խմբում:

Աշակերտների 28 տոկոսն այս տարիքում դեռ չի կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում: Ամենացածր միջին միավորները գրանցել են արհեստավոր, գյուղատնտես, սպորտսմեն մասնագիտություններն ընտրողները, ամենաբարձր միջին միավորները՝ գիտնական, տնտեսագետ,

իրավաբան, լրագրող, բիզնեսմեն, բժիշկ և ծրագրավորող մասնագիտություններն ընտրողները:

8-րդ դասարանի աշակերտների 60.5 տոկոսը ավելի հեշտ հաղորդակցվում է ռուսաց լեզվով, 22.1 տոկոսը՝ անգլերենով, նրանք նշված առարկաներից ցուցաբերել են բարձր արդյունքներ: Ոչ մի առարկա չնշած աշակերտներն անգլերենից գրանցել են 3.9 միջին միավոր (1.2-ով ցածր տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից), ռուսաց լեզվից՝ 4.7 (1.3-ով ցածր տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից):

Մասնակից աղջիկների 41.9 տոկոսն օգտակար տեղեկություններ ստանում է դասագրքերից, իսկ տղաների 46.9 տոկոսը՝ համակարգչից: Ցածր միջին միավորներ է գրանցել միայն ռուսաց լեզվից հեռուստացույցից օգտակար տեղեկություններ ստացող աղջիկների խումբը, անգլերենից՝ այս հարցին չպատասխանածների խումբը, իսկ տղաները գրեթե բոլոր խմբերում գրանցել են առարկայի ընդհանուր միջին միավորից ցածր միջին միավոր:

- ✓ **Կորելյացիոն վերլուծության արդյունքում ստացված գլխավոր գործոնները, որոնք ազդում են սովորողների առաջադիմության վրա**

Վերլուծության արդյունքում որոշ հարցեր միավորվել են՝ ձևավորելով նոր գործոններ, որոնք կապված են սովորողների առաջադիմության հետ և ինչ-որ չափով ազդում են դրա վրա: «Անգլերեն» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունեն սովորողների վերաբերմունքն առարկային, աշակերտի ինքնագնահատումը, և, իհարկե, մեծ է ուսուցչի դերը: Ծնողների ուշադրությունը նշանակալի ազդեցություն չունի, քանի որ քիչ թվով ծնողներ են կարողանում օգնել իրենց երեխաներին անգլերենից տնային առաջադրանքները կատարելու հարցում: «Ռուսաց լեզու» առարկայի արդյունքների ռեգրեսիոն վերլուծության արդյունքում պարզվեց, որ ստացված փոփոխականներից առաջադիմության վրա նշանակալի ազդեցություն ունեն սովորողների տնային հանձնարարությունները և աշակերտի ինքնագնահատումը: